ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԻԼԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սույն թվականի մայիսի 8-ին Իտալիայում պաշտոնական այցելությամբ գտնվող Իրանի Իսլամական Հանրապետության նախկին նախագահ Այաթոլլահ Մուհամմադ Խաթամին հյուրընկալվեց Իտալիո հայ համայնքի կողմից՝ գլխավորությամբ Իտալիո հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահենյանի: Հանդիպումը տեղի ունեցավ Միլանի Հայ Տանը, որին ներկա էին նաև Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանը, Իտալիայում և Վատիկանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանը, Միլանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, Իտալիո հայոց միության և հայ միութենական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ, ովքեր իրենց ողջույնի խոսքերն ուղղեցին Այաթոլլահ Մուհամմադ Խաթամիին:

Իտալիո հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետը, հանուն համայնքի անդամների բարի գալուստ մաղթելով և այցելության համար շնորհակալություն հայտնելով Այաթոլլահ Մուհամմադ Խաթամիին, կարևորեց Իրանի և հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդմանն ի խնդիր նրա ծավալած գործունեությունը և Մուհամմադ Խաթամիին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի բարեմաղթանքներն ու ջերմ ողջույնները:

Հանդիպման ավարտին Այաթոլլահ Մուհամմադ Խաթամին իր շնորհակալական խոսքում անդրադառնալով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը՝ մասնավորապես շեշտեց, որ «քրիստոնյա հայ ժողովուրդը, միշտ հավատարիմ մնալով իր ազգին ու իր Եկեղեցուն, օրինապահ քաղաքացի է եղել աշխարհի տարբեր երկրներում, որի վառ ապացույցն է և Իրանի հայ համայնքը»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ԵՎ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՄԻԼԱՆԻ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Միլան, 13 մայիսի 2007 թ.)

Սույն թվականի մայիսի 13-ը Իտալիո հայ համայնքում նշանավորվեց գեղեցիկ իրադարձությամբ:

Միլանի Սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցում, հընթացս Սուրբ Պատարագի, որին ներկա էին նաև Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանը, Վենետիկի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ Հայր Վահան Օհանյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը, Իտալիո հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահենյանը, տիկին Սոնա Իրիշյանին հանձնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Օրհնության գիրը, իսկ տիկին Ջինա Սերապյանին և տիկին Մարի Մենդիկյանին՝ երկարամյա ազգանվեր ու նվիրյալ գործունեության համար Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներ-